

ՆԱԽԻՉԵՎԱՆԻ
ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ
Կ Ա Ր

ՆԱԽԱԱՒԱՆ

Ե. ԼԱՂԱՅԵԱՆԻ

Պարսկանայոց գաղթականութիւնը¹⁾ նորից զօրեղացրեց Նախիջևանի ռատիկանական շրջանում արդէն մարող հայկական տարրը, որ այնուհետև չնորհիւ տիրապետող խաղաղութեան և ապահովութեան, սկսեց տնտեսապէս բարգաւաճել և ենթարկուի խաղաղ՝ կուլտուրական զարգացման կարճ միջոցում շինուեցան բաւականաչափ ջրանցքներ, երկիրը ծածկուեց խաղողի բաղրամիւ այգիներով, հացահատիկների և բամբակի արտերով, հարթուեցան ճանապարհներ և հաստատուեցան փոստային հաղորդակցութեան, ապրանքների տեղափոխութեան գրասենեակներ, արգիւնաբերական զանազան ընկերակցութիւններ, սկսեց ծաղկել թէ ներքին և թէ արտաքին վաճառականութիւնը, նախակին խաչագողները վաճառականական յարաբերութիւններ սկսեցին մի կողմից Մոսկովյայի, Լոձի, Նիմնի-Նովգորոդի և միւս կողմից Թաւրիդի, Թէհրանի և այլ քաղաքների հետ:

Նախիջևանի շուկան սկսեց հետզհետէ մեծանալ և ոռւսական մւ պարսկական ապրանքների փոխանակութեան կենտրոն դառնալ, հրեացին բաւական մեծ ուժար և վարկ ունեցող վաճառականներ, բացուեցան պետական և հայկական դպրոցներ, պարսկական ազգեցութիւնը սկսեց թուլանալ, եւրոպական հանդերձների, սարք ու կարգի հետ սկսեցին թափանցել եւրոպական գաղափարներ, բացուեցան լայն, կանոնաւոր փողոցներ, շինուե-

1) Ազգ. Հանդէս գիրք XIII

ցան հասարակական զրոսավայրեր, ժողովարան, մի և երկյարկանի կանոնաւոր, փողոցի վրայ նայող և ոչ ցեխի պատի յետևում թաքնուած տները, կանացի դասը ազատուեց հարեմական փակուած գրութիւնից, սկսեց յաճախել գաղրոց, երևալ զրոսավայրում, բիշ քիչ հետաքրքրուիլ հասարակական հարցերով։ Նոր սերունդը դիմեց ստար բաղաքներ՝ միջնակարգ և բարձրագոյն կրթութիւն ստանալու։

Սակայն յանկարծ հայ-թուրքական եղբայրասպան ընդհարումը (1905 թ. Մայիսի 12-ին) եկաւ նորից քայլքայելու ժողովրդի տնտեսական դրութիւնը և յամրացնելու խաղաղ կուլտուրական զարգացումը¹⁾։

Կրօնական զարգացում. — Նախճաւանի կրօնական զարգացման վերաբերութեամբ մեր պատմագիրները միմիայն մի քանի, հատուկտոր ու անկապ տեղեկութիւններ են տուել, որոնց ամփոփելով տեսնում ենք, որ այստեղ հաստատուած է եղել Մարտվատական, կամ Ոստանի, կամ Սեփական զնի և կամ լոկ նախճաւանու կոչուած եպիսկոպոսական աթոռ, որ Ս. Գրիգորից կարգուած է եղել յառաջին բարձի ի ձախմէն, որից բարձր եղել է միայն աջակողմեան նախագահը, որ այն ժամանակ եղել է Հարքայ, իսկ յետոյ Տարօնոյ եպիսկոպոսը, որպէս կաթողիկոսի աթոռակար։ Սակայն յետոյ շատ ժողովներում այս եպիսկոպոսը համարուել է առաջինը²⁾, իսկ մի քանիսում առաջնին մօտիկու է. զարու սկզբին, Արքահամ կաթուղիկոսի ժամանակ, երբ զրացիները բաժանուել են Հայերից. «Ետուն զմենարապօլտութիւն Մարդաբետական եպիսկոպոսին թէդորոսի», ապա և նորա «Հպարտացեալ եպիսկոպոսունս ընդ ձեռամբ լինել... յորմէ երկուցեալ Հայոց...առին ի նմանէ և (հետոն առաջնորդացն Սինեաց, ըստ որում նորա) և յառաջին հարցն նոյն պատուով (էին) կոչեցեալ³⁾)։

Թէպէտ և Օրբելեանն այսպէս է ասում, սակայն և այնպէս տեսնում ենք, որ Սիրոն կաթուղիկոսի ժողովում Գէորգ Ռստան

1) Երկար տատանումից յետոյ ես որոշեցի չնկարագրել այս ընդհարումը, որովհետու նախ ինքս ականատես չեղայ, ես ճանապարհին էի, երբ սկսւեց կոտորածը, ուստի և յետ դարձայ գնացի նոր-Բայազէտ, երկրորդ՝ դեռ ևս սրա բռն պատճաները, տուած վնասները և ունեցած հետևանքները լիովին և նիօս որոշ շելու հնարաւորութիւն չկայ, քանի որ սա դեռ ևս պատճութեան սեպհականութիւն չէ դարձել, և երրորդ՝ դեռ այնքան թարմ է սրա ազգեցութիւնը, որ հազիւ թէ կարելի լինի օբէկտիւ կերպով քննել։

2) Խնճիճեան. եր. 220.

3) Ստեփ. Օբբելեան. գլ. իշ.

եպիսկոպոսը յիշւում է կաթուղիկոսից անմիջապէս յետոյ, ինչպէս և դրանից առաջ Մանագկերափ ժողովում Թադէոս Ոստան եպիսկոպոսը՝ Հաւանական է, որ այս եպիսկոպոսութիւնը իւր առաջնորդութիւնը կորցրած լինի այն ժամանակ, երբ վերացել է մարտապետական նախարարութիւնը կամ պաշտօնը:

Ժ. դարում այս աթոռը տեղափոխուել է Մարդաստան գտւառի Հսմբոյրազան աւանը,¹⁾ որ հաւանականօրէն գտնուել է Մարդայ Նախավկույի վանքի մօտ, որի անունով և եպիսկոպոս յիշւում է այդ Ժ. դարի կիսին:

Այս եպիսկոպոսներից Խնճեան և Ալիշան հայրերը յիշատակուած են դուել մեր մատհնազրների մէջ հետևեալներին.

Ճ65 Թաջաջ.

450 Երեմիա.

510 Ներսէս

553 Գրիգոր.

570 Յովհաննէս.

605 Թէոդորոս.

632 Յովհաննէս

688 Թադէոս.

768 Գէորգ.

850 Սահմկէ և ղբայր Ապուսահակ նահատակին.

976 Բարգէն.

1175 Խաչիկ.

1221 Զաքարիա.

1541 Աթանաս.

1544 Կարապետ.

1660 Առաքել Բոպիկ.

1706 Յակոբ.

1837 Թուից Նախիջնանում բացուել է հոգևոր կառավարութիւն և հաստատուել յաջորդութիւն՝ ենթարկուած Երևանի թեմի առաջնորդութեան:

Նախիջնանի ոստիկանական շրջանը տուել է նաև միքանի աջքի ընկնող հոգեորականներ, ինչպէս Ա. Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեան, որ երկար ժամանակ եղել է Երևանի թեմի առաջնորդական փոխանորդ, 6000 ր. յատկացրել է հայ ժատենագիրների հրատարակութեանը և այն. Բ. Մեսրովը արքեպիսկոպոս Սմբատեան, որ Շամախու թեմի առաջնորդական և այլ պաշտօններ վարելուց զատ՝ պարապել է հնախօսութեամբ, յայտնագործել

¹⁾ Թովմա Աբերունի. գ. 7.

20 սեպտեմբեր արձանագրութիւններ և կազմել Գեղարքունի գաւառնի, Շամախու թեմի և Երնջակայ գաւառակի նկարագրութիւնը՝ Գ. Սահակ աւագ քահանայ. Սահակեան, որ ստացել է բարձրագոյն կրթութիւն և յայտնի է իւր կազմած կրօնի դասագըրքերով:

Մատուր զարգացում. Նախճաւանը մտաւոր զարգացմամբ բաւական յետ է մասած՝ համեմատելով Գողթնի հետո Բացի սրանից՝ այստեղի բնիկ ժողովուրդը, ինչպէս աստաղատցիները եարժեցիների մի մասը և այլն, համեմատաբար աւելի բարձր են մտաւորապէս՝ քան Սալմաստի գաղթականները և սրանք աւելի քան խոյեցիները.

Կարծում եմ, որ այս երկոյթը կարելի է բացատրել նրանով, որ սրանք. մինչեւ այս միենոյն գաւառում՝ համախմբուելը ոչ հաւասար մտաւոր զարգացման են եղել: Գողթն ու Նախճաւանը շնորհիւ այն մեծ վաճառականութեան, որ վարել են անցեալում, շատ աւելի բարձր քաղաքակրթութեան են հասել, քան Սալմաստըն ու Խոյը, այս պատճառով և չնայելով որ վերջիններս անհամեմատ քաղմաթիւ են, այնուամենայնիւ չնն կարողացել ձուլել իրենց մէջ այս երկու բնիկ փոքրաթիւ ժողովուրդներին, որոնք այս հոծ գաղթականութեան մէջ մնացել են որպէս առանձնացած օազիսներ:

Մեր ծրագրից գուրս է ծանրանալ այս կէտի վրայ¹⁾ , ուստի և ստիպուած ենք շատանալ ասելով, որ միակ գրական գէմքը, որ տուէլ է այս գաւառակը՝ Մանուկ Աբեղեանն է, յայտնի իւր «Հայ ժողովրդական հաւատաքը» (գերմաներէն լեզով), «Հայ ժողովրդական առասպեկները» Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ, «Ժողովրդական խաղեր» «Հայ ժողովրդական վէալը» և այլ աշխատութիւններով:

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Այժմեան Նախիջևանի կամ Ալիսապատի ոստիկանական շըբջանը բազկանում է 31 գիւղերից, բաժանուած երեք գիւղական հասարակութիւնների՝ Ծխմահմուտի (14 գիւղ), Թմբուլի (9 գիւղ), և Կվրաղի (8 գիւղ): Սրանցից առաջին երկուսի բնակիչները հայեր և թուրքեր են, իսկ վերջինինը՝ թուրքեր և քրդեր: Զուտ հայաբնակ գիւղերի թիւն է՝ 12, զուտ թրքաբնակը՝ 13, հայ և թուրք խառն՝ 5. թուրք և քուրդ 1:

1) Եւ եթէ այդ արինք Գողթան գաւառը նկարագրելիս՝ ենթարկուեցանք մամուլի խիստ յարձակման:

Ամբողջ շրջանի բնակչութեարի թիւը¹⁾, չաշուած քաղաքինը, համառում է ընդամէնը 24,977 հոգու, որից 13,156 արական, 11,823 իգական։ Ըստ ազգութեան՝

Հայեր 6,562 ար, 6,098 իգ. 12,660 հոգի 50,7 %

Թուրքեր 6,247 ար. 6,452 իգ. 11,699 հոգի 46,8 %

Քրդեր²⁾ 347 ար. 273 իգ. 620 հոգի 2,5 %

Նախիջեւան բաղաքր. — Այս ոստիկանական շրջանի, ինչպէս նաև ամբողջ գաւառի, կենտրոն համարում է Նախիջեւան քաղաքը, որ սփռուած է Արաքսից 8 վերստ դէպի արևմուտք, ՏՊՇՀ³⁾ հիւսիսային լայնութեան և 7306' արևելեան երկարութեան աստիճանների տակ, Դարաշուղ լերան գառիվայրի վրայ, որ ծովի մակերեսոյթից 2875 ոտնաչափ բարձրութիւն ունի։ Քաղաքը հնումը անհամեմատ աւելի մեծ տարածութիւն է ըռնել, իսկ այժմը տեղաւորուած է միայն 136 դես. 1440 ք. ս. տարածութեան վրայ, Քաղաքի գրեթէ մէջ տեղով անցնում է մի ջրանցք, որ սկիզբն է առնում մի վերստ հեռու գտնուղ Նախիջեւան-գետից։ Սա բաղաքը բաժանում է 2 ոստիկանական մասերի։ Բայց ջրանցքի ջրից, քաղաքը օգտառում է նաև մասը աղբիւրներից, որոնցից միայն երկուսի ջուրը քաղցրահամ է։

Քաղաքի հարաւային մասում երեմն բարձրացել է մի ամբոց, որի կիսակործան պարիսպներն են մնում այժմ։ Սրա շրջապատք համառում է մօտ 1½ վերստի։ Սրա մօտ են գտնուում հին քաղաքի աւերակներից Խանի աշտարակը, սրանից ձախ՝ Աթարէգների պալատի դարպասը, որից շատ չնչին բան է մնացել։ Այս դարպասի երկու կողմը բարձրանում են երկու ազիւսակերտ մինարէներ, ապակերուու աղիւսներով դրուագուած; և դրան վերև մեծ, կապտագոյն արաքական տառերով դրուած է մի արձանագրութիւն, որ Ա. Գետերբուրդի Գիտութիւնների ճեմարանի անդամ Ֆրանսը այսպէս է թարգմանել։ Խմասուն, արդար, օգոստավիառ քագուոր եւ արաքեկ Աբունաաթար Մուհամմեդ, որդի Ելրիկուզ արաքեկի, որի գերեզմանը լուսաւորէ Աստուած²⁾։

Միւս արձանագրութիւնը:

Եւ զործակալն Նուրէսսին նեծելապես եւ նարկանան Աթարէկի վիճակների տիմեց. Անեամ Էպիւպեկրի որդի, Նախինաւանի նարտարապես։

Սրանից փոքր ինչ հեռու բարձրանում է Աթարէգների գըմ-.

1) Վիճակագրական մանրամասն տեղեկութիւններ լինելու են յետոյ ամբողջ գաւառի մասին մի անգամից։

2) Bulletin scientifique publié par l'Académie № 1. II. Vol. 1837.

բէթ. (Աթարէկ քիւմբէզի) կոչուած աշտարակը, որ մի գեղեցիկ վրիխ է:

Սա նմանում է տասերկու անկիւնանի կամ 12 տափակ խորանաձև կողմերով և քանդակազարդ շրջանակով մի մեծ աշտարակի, որ 96 տոնաչափ շրջապատ և 70 տոնաչափ բարձրութիւն ունի: Երեսները գոյնզոյն և զանազանակերպ աղիւաներով ծածկուած են, և շուրջը կայ մի բարձրաքանդակ, 1^{1/4} արշին երկարութեան տառերով գրուածք, որից պ. ֆրանը թարգմանել է միայն մի քանի հատուած:


Փառքն աօխ սրի եւ կրօնի, որին ամեն տրարձեալ Աստուածը ոլորմի.—յանուն ամենաբարի, ամենաօրումած Աստուծոյ.—պատուիեց այս ժրում ժինուրիւնը իմաստուն՝ արդար, աստուածապան, յաղորդ, մեծ բազաւոր Շեմսկդ-դին:—հաւատոյ արեգակի ու իսլամի եւ մոլիմանների օճանդակը¹⁾:

Այս երկու արձանագրութիւնների մէջ յիշուած անձնաւորութիւններից առաջինը Ատրպատականի երկրորդ Աթարէկն է, ելտկուզի որդին, որ թագաւորել է 1145—1225 թւականը, Արունագագար Մուհամէզը կառավարել է 1172 մինչև 1186 թ.: Եէծցէդինը, որի մասին խօսում է երկրորդ արձանագրութեան մէջ, ըստ պ. ֆրանի Ելտկուզը ինքը պիտի լինի, որ այդ մականունն է կրել Նրա թագաւորութիւնը տևել է 1146 մինչև 1172 թ.²⁾:

Այսպէս ուրեմն, Նախիջևանի ամենագեղեցիկ շինքերը ԺԲ և մասամբ ժդ գարերի գործ են:

1) Այս աշտարակի շրջագրուակի (կարմիզի) տակ ևս եղել է մի ընդարձակ արձանագրութիւն, որից միայն կտորներ են մասնակցել. Խանիկովը 1850 թ. կարդալով այս կտորները եկել է այն եղանակացութեան, թէ այդ արձանագրութիւնը մի ազօթք է՝ կադմուած Հուանին համարեա բոլոր գլուխներ սկզբում դրուած խորագրից, III գլխի 15, 16 և 17 տան սկզբից ու ամրող ՀXII դիմից: Ահա այդ ազօթքը իւր ամբողջութեամբ. Յանուն ողորմած և զթած Աստուծոյ: Համբերողներ, ճշմարտութիւն խօսորներ, ազօթողներ, ողորմողներ և ողորմելու համար Աստծուն առաւօտեան ազօթքներ վերառագողներ, Աստուած . Վկայում է: Զկայ ուրիշ Աստուած, բացի իրենից և հրեշտակները, և իմաստունները, և ճշմարտասէրները կրկնում են: Զկայ Աստուած բացի նրանից, ամենազօրից ու ամենայն ինչ ստեղծողից: Յանուն ճշմարտութեան առաջի Աստուծոյ չկայ ուրիշ կրօն, բացի Խուլամը: Ա.-ա. Աստուած մի է, նա Աստուած է յաւիտենական, նառչինչ չէ ծնել և ինքը չէ ծնուել, նրա նմանը չկայ. Ռվ Աստուած («Կավկազ» 1850 № 76 և 1851 № 36).

1) D. de Montpereux. Voyage autour du Caucase. Paris, 1840. հատ. IV. եր. 12.



Ааратъ.

Արարատ.

Ararat.

Գեղեցիկ շէնքերից՝ մինն էլ մի մեծ մղկիթ էր, որ կիսաւեր դրութեամբ մնում էր մինչև 1890-ական թուականները, երբ գաւառապետը հիմնովին քանդել առաջ, երկիւղ կրելով որ մի գուցէ յանկարծակի քանդուի և մնաներ պատճառի:

Սակայն հնագիտական յիշատակարաններից ամենահինը նոյի գերեզմանն է, որ բարձրանում է հին Նախիջևանի քաղաքատեղուած բազմաթիւ շէնքերի որմնապատերով, և մի ընդարձակ դերեզմանատունով:

Սա 10 ոտնաշափ տրամագծով ութանկիւնի մի շէնք է, գմբեթածածք, մէջտեղում մի սիւս: Ունի մի ցածր դուռ: Ոչ միայն հայերը, այլ և հրէաներն ու մահմեդականները հաւատում են այս աւանդութեան և յաճախ, մանաւանդ զատկի մնուեցին, ուժան զալիս այստեղ:

Աւանդութիւնը ցոյց է տալիս նաև նոյի քրոջ գերեզմանը այստեղից փոքր ինչ հեռու մի ըլլի գագաթին:—սա քարերի մի կոյտ է և մի աղիւսէ պատ, որ համարւում է մատուռի մնացորդ:

Նոյի գերեզմանից փոքր ինչ հեռու կան մի քանի դետնաափոր սենեակներ, մի մի դռնով, որի մէջ թուրքերը պահում էին ննջեցեալներին՝ մի առ ժամանակից յետոյ Քեարբալի ուխտատեղին ուղարկելու համար: Սրանց մօտ է նաև մի ուրիշ ստորերակրեայ անցք, որ բաւականաշափ ձգւում է դէպի Նախճաւան—գետը: Սա թերևս հնումը իրը ջրի ծածուկ ճանապարհ է ծառայել պաշարման դէպօւում:

Նոր քաղաքամասը, որ տարածւում է այստեղից դէպի արևմուտք, զարծեալ կրում է պարսկական քաղաքի տեսք:—փողոցները նեղ, առանց մայթերի, վերին աստիճանի կեղտուած ու ցեխուած, աները թաքնուած ցեխի պատերի յետեւ, մի յարկանի, տափակ կտուրներով, փոքր պատուհաններով և զեղտուած զաւիթներով: Միակ բացառութիւնը արեւմտեան ծայրում բարձրացող քաղաքյին այգին և նրա շուրջը ձգւուող մի երկու փողոցներն ու մի քանի տներն են: Քաղաքային այգին կառուցուած է 1872 թ. Աւգակով գաւառապետի ջանքերով թրքաց հին գերեզմանատեղում, ունի շատ բարձր և սաղարթախիտ չինարի, ակացիա, սոսի, փշատի և այլ ծառեր: Կայ բուտոնտա, բուֆէտ և զանազան խաղեր խաղալու յարմարութիւններ: Ամառը շաբաթական միքանի անգամ նուազում է այստեղ զինուորական երաժշտական խումբը: Այգուց գեղեցիկ կերպով երևում է ձինափառ Արարատը:

Այգու արևմտեան ծայրում բարձրանում է սրբատաշ քարով շինուած ուսւաց փոքրիկ, բաւական գեղեցիկ եկեղեցին, իսկ

արևելեան կողմը, բաւական ցած, կանգնած է նոյնպէս բաւական գեղեցիկ, կարմիր, սրբատաշ քարից շինուած հայոց գմբէթազարդ, Ս. Գէորգ եկեղեցին, որի գաւթում գտնուում են հայոց յաջորդաբանը, զպոոցը և նախանցեալ տարի Մեսրովը վարդապետ Տէր Մովսիսեանի եռանդուն զանքով կառուցուած խանութները:

Մի ուրիշ եկեղեցի էլ Ս. Երրորդութեան անունով բարձրանում է այստեղից փոքրինչ հեռու, այն հին եկեղեցու տեղում, ուր Կաշմ զօրապետը 705 թուին այրից հայ նախարարներին Շարտարապետական տեսակէտից սա առանձին նշանակութիւն չունի:

Կան նաև միքանի մզկիթներ, որոնցից նշանաւոր են երկուսը՝ բարձր մենարէներով:

Քաղաքի զբեթէ կենտրոնում գտնուում է շուկան, բաւականաչափ խանութներով, որը, սակայն, կրակի ճարակ դարձաւ թուրք հայկական ընդհարումների ժամանակի:

Քաղաքը շրջապատուած է խաղողի բազմաթիւ այգիներով, որոնց ոռոգելու համար բաղաքի հիւսիսային կողմում դեռ պարսից տիրապետութեան ժամանակ շինուած է եղել մի լճակ, վաթունական թուականներին Շանդիրէյ գաւառապետի ջանքով այս լճակը վերանորոգուել է, սակայն այժմ դարձեալ աննախանձելի զրութեան մէջ է գտնուում:

Բացի անառողջ կլիմայից, Նախիջևանը ունի նաև բազմաթիւ գեղին և սև կարիճներ, մորմ (փալանգ), մոծակներ և միքանի մանրադիտական միջատներ, որոնք թունաւորում են կեանքը գարնան և ամրան ընթացքում:

Քաղաքի արևելեան կողմում գտնուում էին Մեծ և Փոքր Հաճիվար գիւղերը, որոնք այժմ միացած են քաղաքի հետ և կազմում են նրա թակերը: Մեծ Հաճիվար գիւղում մի տասն և հինգ ապաջ բաւականաչափ հայեր կային, որոնք, նեղուելով թուրքերից, տեղափոխուել են Նախիջևան: Փոքր Հաճիվարում, որ նոյնպէս Թաղաքեանտ է կոչւում, բոլորն էլ հայեր են, 71 տուն, 109 ար. 99 իդ. ի միասին՝ 208 հոգի:

Քաղաքում կայ պետական քաղաքային չորս դասարանեան, հայոց եկեղեցական-ծխական երկսեռ և մի թուրքաց քաղաքային դպրոցներ: Կայ նաև գաւառական բոլոր հիմնարկութիւնները՝ ոստիկանատուն, հաշտարար դասարան, պետական գանձարան, պոստ-հեռագրատուն, պոստային կայարան, ինչպէս նաև մի ժողովարան, մի հիւրանոց և մի բանի սաստիկ կեղտոտ բաղանիսներ:

Բնակիչների մեծագոյն մասը շիա պարսիկներ են, իսկ փոքրագոյնը՝ լուսաւորչական հայեր, սրանք էլ մեծ մասամբ Սալմասարի գաղթականներ, միքանի տուն էլ բնիկներ, Բոլոր բնակիչների թիւը՝ 1906 թուի սկզբին եղել է 4698 ար. 4104 իգ-իմիասին՝ 8802 հոգի, որից՝

Հայեր 1270 ար. 1084 իգ. իմիասին՝ 2354 հոգի

Ռուսներ 124 ար. 116 իգ. ի միասին 240 հոգի

Եւրոպացիներ 3 ար. — իգ. ի միասին 3 հոգի

Քարդվելցիներ. 15 ար. 5 իգ. ի միասին 20 հոգի

Պարսիկներ 3286 ար. 2899 իգ. ի միասին 6185 հոգի¹⁾

Թուրքերը պարապում են այգեգործութեամբ, մանր արհեստ ներով և մասամբ գորգերի առևտրով, որ բերում են Պարսկաստանից. Հայերը՝ առաւելապէս առևտրով, այգեգործութեամբ, գինեգործութեամբ և արհեստներով:

Նախիջենանից դէպի ճարտար գտնուող գիւղերը.— Նախիջենանից դէպի արևմտահարաւ երկու վերստ հեռաւորութեամբ գտնուում է Այլաբատ գիւղը, ($63^{\circ}3'46''$ — $39^{\circ}13'48''$) որի արևելեան կողմում տարածում է մի ընդարձակ դաշտ՝ ծածկուած վարունգի, սեխի, ձմերուկի բոստաններով, իսկ միւս երեք կողմը պատած է փոքրիկ բլրակներով: Գիւղում առանձին ուշադրութեան արժանի ոչինչ չկայ: Ունին մի հասարակ եկեղեցի և նրա գաւթում հայոց ծխական գլուխոցի մի խարխուլ շէնք: Յաճախ Նախիջենանի ոստիկանական շրջանը այս գիւղի անունով է կոչում, թէպէտ և ոստիկանը այս գիւղում չի բնակւում, այլ քարքում:

Բնակիչները բոլորն էլ հայեր են 103 տուն, 303 ար. 281 իգ. ի միասին՝ 584 հոգի: Պարապում են պարտիզանութեամբ, երկրագործութեամբ և այգեպանութեամբ. ունին 179 դ. 2200 ք. ս. վարելահող, 63 դ. 103 ք. ս. այգի. 88 դ. 203 ք. ս. արօտատեղի, 1 դ. 1680 ք. ս. մարդագետին:

Մեծ Հաջիվարից հազիւ երկու վերստ դէպի հարաւ, նոյն դաշտի վրայ, փուռած է Նախարապատ գիւղը, ($63^{\circ}6'2''$ — $39^{\circ}11'43''$) որ բանում է միայն 3 դ. 2140 ք. ս. տարածութիւն Գիւղում ուշադրութեան արժանի ոչինչ չկայ. բնակիչները թուրքեր են,

¹⁾ Բոլոր վիճակագրական տեղեկութիւնները վերցրուած են Անդրկովկասեան Վիճակագրական ատեանից, վերաբերում են 1906 թուին, և դեռ ևս չեն հրատարակուած: Ծնորհակալութիւն եմ յայտնում ատեանի աւագ խմբագրող պ. Պագիրնին, որ տուեցինձ ձեռագիրները՝ օգտուելու:

39 տուն, 138 ար. 112 իգ. ի միասին՝ 250 հոգի. Ունին 475 դ. վարելահող և 26 դ. արօտատեղի:

Շաբարապատից դէպի արևմտահարաւ, մօտ 6 վերստ հեռու գտնում է 'Լարախան բլկու գիւղը (63°37'6"-39°11'23"), որ բանում է 7 դեսետին 240 ք. ս. տարածութիւն, և շրջապատուած է 37 զես. 1797 ք. ս. այգիներով: Ունի մի քարաշէնեկեղեցի: Բնակիչները հայեր են 192 տուն, 575 ար. 543 իգ. ի միասին 1118 հոգի: Ունին 498 դ. 802 ք. ս. վարելահող և 95 դ. 199 ք. ս. արօտատեղի:

Այստեղից էլ դէպի արևմտահարաւ, գրեթէ Արաքսի ափին ընկած է 'Ղարաջուլ գիւղը (63°1'8"-39°10'37"): Սա բաւական ընդարձակ է, բանում է 18 դ. 1830 ք. ս. տարածութիւն: Սա ևս ուշադրաւ ոչ մի բան չունի, բնակիչները թուրքեր են, 118 տուն, 513 ար. 447 իգ. ի միասին 160 հոգի:

Ունին 490 դ. վարելահող, 1030 ք. ս. այգի, 523 դ. մարդագետին և 10255 դ. արօտատեղի:

Մրանից հազիւ մի վերստ դէպի արևելահարաւ ընկած է ուղիղ նրա կէս մեծութեան (9 դ. 528 ք. ս.) Բուլղան գիւղը (63°14'5"-39°10'10"): Բնակիչները թուրքեր են, 96 տուն, 51 ար. 389 իգ. ի միասին 840 հոգի:

Ունին 242 դ. 2310 ք. ս. վարելահող, 5 դ. 532 ք. ս. այգի և 66 դ. 2090 ք. ս. արօտատեղի:

Բուլղանի հանգէպ դէպի արևելք, ընկած. են Պատա-դիզա (63°6'5"-39°10'24") փոքրիկ (5 դ. 1288 ք. ս.) աննշան գիւղը, որի մօտ 2 դ. 50 ք. ս. տարածութեամբ ձգում է մի անտառ և 1 դ. 2064 ք. ս. այգիները: Բնակիչները թուրքեր են, 81 տուն, 351 ար. 309 իգ. ի միասին 660 հոգի: Ունին 593 դ. 1718 ք. ս. վարելահող և միայն 10 դ. 1200 ք. ս. արօտատեղի:

Հոշադիզայից հոգիւ 1/2 վերստ դէպի հարաւ արևմուտք, իսկ Նախիջևան քաղաքից միայն 4 վերստ հեռու միկնոյն գաշտավայրի վրայ փռուած է Խմբու գիւղը. (61°5'21"-39°10'8") որ հաւանօրէն հին Տամբազը¹⁾ պիտի լինի: Գիւղը, որ բանում է 8 դ. 1884 ք. ս. տարածութիւն, շատ լաւ տպաւորութիւն է թողնում, որովհետև ունի բաւական լայն փողոցներ, եւրոպական ձևի մի և երկարկանի աներ, որոնցից շատերի առաջ կան պարտէզներ. եւկեղեցին բաւական գեղեցիկ է, քարաշէն, շինական գատարանի շէնքը միանգամայն գոհացուցիչ: Գիւղի մէջ գետ չկայ, այլ միայն չորս յորդահոս ազրիւրներ, որոնք բաւականութիւն են տա-

¹⁾ Ալիշան. Միական. եր. 504.



с. Тумбуль

Թմբուլ գյուղ

Village de Tumboul

լիս նաև այդիներին, իսկ արտերը ջրւում են Նախիջևանի-գետից բերուած մի քանի ջրանցքներով, Դիւղը բաժանւում է երկու առանձին թաղերի, հայկական և թրքական։ Հողը կալուածատիրական է, պատկանում է Նախիջևանի նախկին խանի թոռանը, միայն մեծագոյն մասը բաշխուած է ժողովրդին, որի համար վըճարում են բերքի 30-ից 4-ը։ Իսկ այդիների համար՝ իւրաքանչիւր փթատեղուն (^{1/10} դես.) 40 կոպէկ։

Բնակիչները հայեր և թուրքեր են, հայերի փոքրագոյն մասը՝ 16 տուն, բնիկներ են, մնացածը՝ 132 տուն՝ Սալմաստի Սաւրի գիւղից գաղթականները, Բնիկները միանգամայն ենթարկուել են գաղթականների ազգեցութեան, մոռացել են իրենց բարբառը, ոովորութիւնները և ընդունել սաւրեցիներինը։ Դաղթականները, որ շատ աչքարաց, ընդունակ և ճարպիկ մարդիկ են, թէ մտաւորապէս և թէ նիւթապէս բարձր են շրջակայ գիւղացիներից։ Մրանց մասին երկարօրէն կը խօսենք ազգաբնակութեան գըլիում, ուր և կը բացատրենք, թէ ինչո՞ւ սրանց ռխաչագոյն են անուանում։

Թուրքերն էլ հնթարկուելով այս հայերի ազգեցութեան, շատ աւելի քաղաքակրթուած են, քան մօտակայ նեհրամ գիւղի թուրքերը, որոնց մէջ հայեր բոլորովին չկան։

Ընդհանրապէս բոլոր բնակիչներն էլ պարապում են երկրագործութեամբ, այգեպանութեամբ, բամբակի մշակութեամբ և շերամապահութեամբ։ Թուրքերը պարապում են նաև անսամնապահութեամբ, իսկ հայ գաղթականներն առևտրով թէ գիւղում, և թէ մանաւանդ Ռուսաստանի զանազան քաղաքներում։ Պատրաստի հաղուստեղինի առևտուրը սրանց և Եարցիցոց սիրած պարապմունքն է համարւում։

Ուսին 888 դ. 361 ք. ս. վարելահող, 40 դ. 1818 ք. ս. այգի, 12 դ. 2123 ք. ս. մարգաղետին, 187 դ. 167 ք. ս. արօտատեղի։

Բոլոր բնակիչները կազմում են 196 տուն, 915 ար. 790 իգ. իմիասին՝ 1705 հոգի, որից հայերը 148 տուն են. 677 ար. 618 իգ. իմիասին 1295 հոգի, իսկ թուրքերը 48 տուն, 128 ար. 172 իգ. ի միասին՝ 410 հոգի։

Թմրուլից երկու վերստ դէպի արևմտահարաւ գտնւում է Նախիսանա (ուտեստի-խան) կոչուած գիւղը, (63°4'—39°8'39'')։ Տեղացիների ասելով գիւղը այս անունը կրում է այն պատճառով, որ մի ժամանակ Նախիջևանի խանի անասունների ուտեստը պահելու տեղն է եղել։ Դիւղը տարածւում է Նախիջևան չայլ-

և Արաքսի միջավայրում, բռնում է 5 դ. 1500 թ. ս. տարածութիւն, ունի երկու յորդ աղքիւր:

Հողը ճահճային է, ուստի և բնակիչները տանջլում են ջերմով: Գիւղի հողերը թէպէտ բալխուած են գիւղացիների վրայ, սակայն պատկանում են Ղուկի-Խան Քալրալախանովին, այս պատճառով և բերքի $7\frac{1}{2}$ -ից մէկը (ըստ տեղացիների 30-ից 4-ը) նաև է ստանում. ընդամենը՝ 721 դես. 2170 թ. ս. վարելահող, 38 դ. 1010 թ. ս. այդի, 1720 թ. ս. անտառ, 88 դ. 570 թ. ս. արօտատեղի ունին Բնակիչները հայեր և 2 տուն 11 ար. 8 իգ. թուրքեր են. ընդամենը 138 տուն, 525 ար. 483 իգ. իմիւսին 1008 հոգի: Հայերը գաղթականներ են Սալմաստի Բանանիա, Սալմաստ, Սաւրի գիւղերից, ինչովէս նաև 2 տուն Աղրակից և 3 Աւրմիալից: Բացի սովորական երկրագործութիւնն ու այգեպանութիւնը, սրանք պարապում են նաև շերամապահութեամբ և ցանում են բամբակ, որ այս շրջանում ամենից լաւն է համարւում:

Գիւղի ծայրին գտնուում է պետական երկդասեան մի դպրոց հինգ տառուցիչներով:

Եմիանայից 2° , իսկ Նախիջևանից 12 վերստ գէպի հարաւդունում է Աստավազ կամ Թազաթեանդ գիւղը ($63^{\circ}4'11'' - 35^{\circ}7'17''$) Սա հնումը բաւական նշանաւոր գիւղ է եղել, որի մասին յիշուած է Թովման Արծրունին՝ Խրամ աւանի տեղը որոշելիս, ասելով, թէ դա գտնուում է, «ի ներքոյ Աստավազը վանացն»: Դա յիշուում է նաև Մաշիկ Ա. կաթուղիկոսի կոնդակի մէջ 976 թուին: Յիշուած է նաև Օբրելեանը, զիւղ կոչելով, որի մօտ ՓԲ. դարի կիսին Սիւնեաց Բարսեղեղ հպիսկոպոսը Պորիով Արաքս, գետը անցնելիս՝ խեղդուել է. նրա մարմինը հանել և տարել են Մաղարդայ վանքը թաղել, Հետզինետէ բարգաւաճելով՝ Աստավատը դարձել է գիւղաքաղաք, ԺԴ. դարի վերջին միաբանուղների հակառակորդ Մաղաքիա Ղրիմսցին այսաեղ գոլոց է հաստատել Սարգիս վարդապետի տեսչութեան ներքոյ: Այստեղ է եղել այն ժամանակները Տաթևացու աշակերտ Աւետիս վարդապետը:

Ժէ. դարի սկզբին Շահ—Արքասը գերի է տարել Աստավատի բնակիչներին Պարսկաստան, և Զաքարիա պատմչի ասելով իբր հարճ վերցըել է հիւղէլ (գիւղնցիկ) անունով աստավատցի մի հայ կին, որ յետոյ դարձել է իւր հայրենիքը և վանք է տարել, ապաշխարել:

Զնայելով Շահ-Արքասի աւերածութեան, Աստավատը շնորհիւ իւր գիւղը, շուտով վերականգնել է, և Ժէ դարի կիսին Դամանիէի ասելով, ներկայացնում էր մի փոքրիկ, գեղեցիկ բաղավ,

ուր կային չորս կարաւանատուն, և որի ամեն մի տունը ունէր մի մի ազդիւր: Զրի առատութիւնը դարձնում էր երկիրը գերա-
ղանց և մանաւանդ գինեւէտ:

Սա աշխարհի միակ երկիրն էր, որ արդիւնաբերում էր Ռո-
նաս (Ronas) կարմրաներկ արմատը, որով ներկում են կտաւները
Պարսկաստանում և Հնդկաստանում:¹⁾

1656 թուին այստեղ մելիք²⁾ էր Մելիք Աստուծատուրը,
իսկ Նադիր-շահի ժամանակ՝ Մելիք Բալումը, որ 1750 թուին «փայ-
լէր երեկի իմն փառաւորութեամբ և ճոխութեամբ»: Սա ուրիշ
հայ իշխանների հետ յիշեալ շահի հարկահաններից սաստիկ նե-
ղութիւններ կրելով վախճանուել է և մելիքութիւնը թողել իւր
Խաչատուր որդուն, որից անցել է թուանը՝ Միքայէլին: 1815
թուին վերջինիս թուաները տեղափոխուել են Թիֆլիս:³⁾

Ժթ. գաջի սկզբին գիւղը հետպհետէ աւերուելով, զրկունէլ է
բնակիչներից, երբ վերջին հարուածը տուել է նրան Արբաս-Միք-
ղա թագամատանզը, որ մեացած ժողովուրդներին անդափոխել է
փոքր ինչ հիւսիս, այժմեան Աստապատ կամ Թաղաքեանտ կո-
չուած տեղը և նրա տեղը շինել մի մեծ ամրոց, քառակուսի ըն-
դարձակ պարսպներով և խրամով: Ասկայն փոխանակ հիմքը հաս-
տատուն անելու, վերի մասերը ծանրացրել էին մեծ քարերով,
ուստի և շուտով սկսել էր քանդուել: Բերդը Արբաս-Միքղի ա-
նունով վերակոչուել էր Արբասապատ: 1827 թուի ուսւ-պարս-
կական պատերազմին Ճիփանըուլաշիր ճակատամարտից յետոյ
յուլիսի 7-ին այս ամրոցն առանց պատերազմի անձնատուք եղաւ
ուստաներին: Գլխաւորաբաէս բերդի դիրքը, և մասամբ նրա պա-
րիսպների անկայունութիւնը պատճառ եղան, որ ուսմները ան-
խնամ թողին ըներդը: որ և շուտով աւերուեց:

Աստապատ գիւլլը ընկնում է Նախիջևան չայի ձախ ափին,
Զանզըլլու—սարի հարաւային կողմը և բանում է 38 դ. 530 ք. ս.
տարածութիւն: Ընդհանրապէս գիւլլը զուրկ է կանոնաւոր փողոց-
ներից, պատած է հողէ պարիսպներով, որտես յետեւում զանուու
ևս աները, որ բաղկացած հն մի սնանի Տնից, Ֆոխտիկից և սրա-
նից: Մի քանիսն էլ ունեն մի մի կանոնաւոր սենեակ: Շատերի
առաջ կամ փոքրիկ պարտէզներ բարյի և պատղամու ծառերով:
Գիւլլը բաժանւում է երկու թաղի՝ արևմտեանը բնիկների թաղն
է, իսկ արևելեանը՝ զաղթականներինը: Խւրաքանչիւր թաղուա

1) Tavernier, I 47.

2) Ա. Վարդանի եկեղ. արձանգրութիւն.

3) Եփրեմ կաթողիկոսի կոնդակից. Լումայ, 1900 գերը Ա.
եր. 293.

կայ մի եկեղեցի, բնիկներինը համեմատաբար աւելի գեղեցիկ է: Գիւղում կայ 9 աղքիւր, որոնց ջրով ոռոգւում են նաև այգիները: Սրանց թիւը ոյժմ այնքան էլ մեծ չէ, այնչդեռ հին Աստապատն ամբողջովին պատաժ է եղել այգիներով: Բնակիչները բնիկներ են և գաղթականներ՝ Սալմաստի Փայաջուկ, Սաւրի, Դրիշկ, Մահլամ, Խոյի Մահլազան, Սէյդավար, Հափթևան գիւղերից: Կան նաև 60 տուն շիա պարսիկներ: Բոլոր բնակիչները կազմում են 391 տուն 1792 ար. 1651 իգ. ի միասին՝ 2443 հոգի, որից 1531 ար. 1432 իգ. ի միասին՝ 2963 հոգի հայեր, 261 ար. 219 իգ. ի միասին՝ 480 հոգի շիա պարսիկներ: Պարապում են երկրագործութեամբ, բամբակի մշակութեամբ, մասամբ շերամապահութեամբ և այգեգործութեամբ: Ունին 1420 դ. 1525 ք. ս. վարելահող, 23 դես. այգի, 27 դ. 1200 ք. ս. անտառ, 361 դ. 1350 ք. ս. արօտատեղի:

Այս գիւղը նշանաւոր է նաև կաւագործութեամբ. այստեղ կայ 60 բրդի գործարան, և 30 բրդի փուռ: Ամբողջ շրջակայքին և դեռ հեռուն սա է կաւէ ամաններ մատակարարում:

Աբրասսապատ ամրոցի հիւսիսային կողմում կիսաւեր կանգնած է Ա. Վարդանի վանիք, որի մասին աւանդաբար պատմում է, թէ Ս. Վարդանի անուան է նուիրուած, որովհետեւ Աւարայրի ճակատամարտից յետոյ ս. Վարդանի և նրա ընկեր Նահատակների մարմինները բերել են տյստեղ ամփոփելու և մինչեւ որ աս պատել (պատահել) են, Մակուի մեծամեծները եկել են և բնութեամբ տարել իրանց գիւղը: Եւ որովհետև ևսատ պատեցաւ այդ նահատակների մարմինները, ուստի և այստեղը կոչուել է Աստապատ:

Ս. Վարդանի վանքը բաղկացած է մի եկեղեցուց և մի գաւթից: Եկեղեցու երկարութիւնն է 28 արշին, լայնութիւնը՝ 20 արշին և բարձրութիւնը՝ մոտ 35 արշին: Շինուած է մի սաժէն բարձրութեամբ կարմիր քարերով, իսկ մնացած մասը թրծած աղիւմներով: Քառանկիւնի չորս սիհների վրայ բոլորում են արաբական կամարներ, որոնց անկիւններում նկարուած են չորս աւետարանիչները: Կամարների վրայ յանկում է մի մանեսկ, որ կրում է մի գմբէթ, 12 պատուհաններով զարդարուած: Եկեղեցու մէջ կայ չորս նեղ և երկար պատուհաններ և երեք դուռն: Սեղանը զարդարուած է երկու շարք արաբական կամարակապ պարհաններով¹⁾: Եկեղեցու հիւսիսային և հարաւային պատերի

1) Պտրհան կոչւում է պատի մէջ թողնուած պատուհանանաման խորշը:

մէջ ևս կան նոյնպիսի պտրհաններ: Ունի երկու կրկնայարկ խորաններ: Արևմտեան մասը, որ կանանց դասն է համարում, թաղակապ է և երկյարկանի: Ներքուստ ամբողջովին սպիտակացրած է և պատերին կան իւղանկար պատկերներ: Երեք դռնից նշանաւոր է արևմտեանը, որ բացւում է գաւթի մէջ:—Ոլորապը տոյտ և կամարակապ երկու սիւների շուրջը ձգւում է շղթայաձն մի բանդակի, որ ներփակում է մի գեղեցկաքանդակ մարմարոնեայ խաչ, ներբեռում մի բարձրաքանդակ՝ Աստուածածինը՝ Յիսուս դրկին, առջեռում մինը՝ ծնրադիր, թերևս եկեղեցու շինողը, Հըրբեշտակներ, մի մի թագ բանած Տիրամօր և ծնրադիր մարդու դիմուների վերեւ: Այս քանդակի երկու կողմը կան մի մի մարմարոնեայ խաչ բար, ինչպէս և մի մի փոքրիկներ սրանցից փոքրինչ ներըև:

Գաւթիթը շինուած է սրբատաշ բարից. այժմ կանգուն են չորս սիւները և սրանց վրայ բոլորող ոռմանական կամարները, կրելով կիսաւեր ձեղունը: Կիսակործան պատերի մէջ բացւում են նեղ և երկար պատուաններ, և երեք դռւն, որոնցից արևմտեանը նոյնպէս քանդակներով և երեք խաչով զարդարուած է:

Եկեղեցու և գաւթի վրայ կան հետևեալ արձանագրութիւնները:

Եկեղեցու արևմտեան դռան վերայ.

՚Ի Թուականիս Հայոց ՌՃ՛Դ¹⁾ կանգնեցաւ սուրբ դուռն այս նրաւագուն յօրինմամբ, որ յանուն սուրբ Վարդան Զօրավարին ի վայելչութին աստուածապան զիւղով ողաքիս Աստապատու զօր եւ կ սուլել խօսայ Սաֆարն ի հալալ ընչից ի փրկութիւն նօգո իւրոյ եւ ծնող ոց իւրօց Միրիջանին եւ Նարենին. եւ կող սկզին Հոռոմին, եւ որդոցն պարոն Յովանիսին եւ Մարգարին եւ Ֆուերն Խանումին եւ...

Դռան վերև, աջ կողմի խաչի տակ.

Սր. խաչս յետի. և Յով սնիսին եւ ծնողն … Հոռոմին. եւ իւր կողակցին բիին ՌՃ. եւ Ե.

Սրա ներքեւի խաչի տակ. Եւ միւս որդոցն Հայրապեսն Պղոսն եւ ծնողն Գանինորին Ոհաննեսին.

Զախակողմեան խաչի տակ.

Սր. խաչս յետի և Խամբակուն եւ ծնողացն Թօղարին եւ Մամախարունին, որդոցն Ատոմին, Բալասանին, մանավանդ յետի և Ամեղադի որդի Հայրապետին եւ որդուն Դաւրին:

Սոյն խաչի մօտ ևս կայ մի ուրիշ փոքր խաչքար, որի տակ գրուած է.

1) ՌՃ՛Դ=1655 թ. Քրիստ.

Սբ. խաչը յետի է դ(ա)բին Դրիգութին, կողակցին Մարիամին, որպոցն Անդրեասին, Ռու Շենքին բլ. Ռժնէ...»

Մրանից ներքեմ ձախ խաչի տակ.

Սբ. խաչը յետի է մելիք Ածերին կրկցին Աւլիա և որպոցն Թարոսին, Դիկողայոսին դուռը Նահագվալին և ճեղացն պային, Սամերակասին բլին Ռժն Ռժն և ն.

Մի քիչ ներքեմ.

Յս. Քս. Աբ. Խաչը յետի է երեսփոխացն բժիշմ. ծնողոցն Ամիր խօն Գալուստին և կողակցին; Դասեր Չոխիսին Մարգարիտին բլին Ռժն:

Եկեղեցու մէջ, սեղանի վերև, խաչի տակ.

Սուրբ խաչը բարեխօս է Ազնից Պետրոսին և ճնողացն Կիրակոսին, Խորունց անին և կողակցոյն Նունուսին, և դաշեցն Ենորհն Պարքարին, Հերիքնազին, բլին Ռժն Ռժն և է.

Սւագանի վրայ՝

Ցիւսակ է սուրբ Ռուազ և Բաբունեցն Աստվածատրին և Վելումենց Կարապետին որդի Աւետիքին բլին Ռժն Ռժն.

Զախ կողմի առաջին սեան վրայ.

Առակերան Տեղակափայ մեծի Բաբունապետի սուրբ խաչը բարեխօս լիցի այս եկեղեցւոյն վերկցու Մարտիրոս Վարդապետին, որ բզմ երկամիք յաւար հասոյց լիւեցել և Ած ողորմի ասց. իւրե և ճնողու Տերեւեսին և Մարքային. Ռժն բլին ¹⁾.

Յետին կողմի աջ մնի վրայ.

Սբ. խաչը յետի է Անտոնի եկեղեցոյն վրկցուի և ճնողն Մարգարի Աննայի. Խճ՛՛ն բլին.

Կանանց դասի թաղական կամարի վրայ.

Աբրի սի ուղի Աղքալին, Ած ողորմի ասեմ. Ռժն բլ. բլին.

Գաւթի արևմտեան դրան խաչքարի վրայ.

Սբ. խաչը բարեխօս է Հառամին և ճնող ացն Խորելարին. Խոր Մարիամին որդի Յովհաննեսին, բլին նին Ռժն.

Մի ուրիշի վրայ, նոյն տեղը.

Սբ. խաչը բարեխօս է Վարդիստրունին և կողակցին Սահակին որպոցն Աձատրին Զաքարին, բլ. նին Ռժն. և ն.

Աբրամապատ ամրոցից գուրս, հազիւ 5 ½ վերստ հեռու, գէպի արևելահարաւ մնում են նախկին Ս. Յովին Շենք կուսաստանի հիմնապատերը, որովհետև Աբրամ-Միրզան քանդել է տուել և քարերը իւր բերդի շինութեան վրայ գործածել. Այս մասին աւանդաբար պատմում են, թէ Աբրամ-Միրզան կամեցիլ է Կարմիր-

¹⁾ Ռժն=1701 թ. Քրիստ.

վանքը քանդել տալ և քարերը բերդի շինութեան համար գործածել, սակայն այս վանքի վանահայր Խաչատուր վարդապետը վիզում մի սուր ձգած գնացիլ չոքել է Արքաս-Միրզի առաջ և ասել. Դերեկ Աստուած, ներքե դու, կամ վերցրու այս սուրը և կտրիր վիզու, և կամ մի քանդիր վանքու Թաղաժառանգը խղճում է, և հրամայում է թողնել Կարմիր Վանքը և Ս. Յովհաննէսը քանդել։ Սակայն ոչ մի պարսիկ յանձն չի առնում առաջինը քանդելու Աստծու այդ տունը. միայնյետոյ մի ասորի բարձրանում է գըմբէթի վրայ և վայր դլորում խաչը. Խաչատուր վարդապետը վրայ է համում և լալով հանում է խաչի միջից ս. Արքստակէսի աջը և տանում Կարմիր վանքը. Արքաս-Միրզան իմանալով ասորու արարքը, և նրա ակնկալութիւնը մի մեծ նուէլ ստանալու, կանչում է նրան իւր մօտ և յանդիմանելով նրան, թէ երբ ոչ մի մահմէզական չհամարձակուեց ձեռք տալ այդ վանքին, ինչպէս նա լինելով քրիստոնեայ, համարձակուեց քանդել նրան, երեկ նրա համար ոչ մի սրբութիւն չկայ, հրամայում է գնդսկահար անել. Բայց և այնպէս' շարունակում է բանդել վանքը և քարերը տանել ամրոցի վրայ գործածելու։

Ինչպէս երեսում է կոփածոյ քարերից, վանքը բաւական գեղեցիկ է եղել և ունեցել է գաւիթ և պարիսպ. Այժմ այդ եկեղեցու տեղը մի հասարակ մատուռ է կանգնեցրած, մօտն էլ մի սենեակ պահապանի համար. Եկեղեցու մօտ կայ մի աւագան, ուր տենդողները լողանում են բժշկուելու յուսով. Սրա մօտ կայ մի ջրաղաց, մի քիչ հեռուն ընկած է նախկին ձիթահանքի ահազին քարը։

Եկեղեցու դրան առաջ մի մարմարոնեայ գերեզմանաքար կայ հետեւեալ տապանագրով.

Ո՞ՃՀ¹⁾

Այս է տապան արձան յայտնի.

Խոջայ Վարդանայ բարեպատի.

Որ է ազգէն կուսանեանցի.

Խոսմակ սորա Գաւիրս տինի,

Որ է եղբայր պարոն Արզմանեանի.

Եւ են որդիկ միսսի Պողոսի.

Աստ Տէր հանգեաւ յոյսն բարի.

Որք հանդիպէ տուք ողորմիս,

Սասուած զձեզ ողորմեցի։

Սրա մօտ կայ նաև երկու հասարակ գերեզմանաքար, եղծուած տապանագրով։

¹⁾ Ո՞ՃՀ=1721 թ.

Ս. Յովհաննիսի կուսաստանից հաղիւ երեք վերստ դէպի հարաւ, Արաքսի անմիջապէս ձախ ափին, մօտ 60 մետր բարձրութեան մի բարարլըի գագաթին բարձրանում է Ս. Ատելիանոսի վանքը, որ այլապէս կոչւում է Քարաւակի կամ Կոմիր վահք, երբեմ էլ Խնորակառա ս. Ստեփանոս Քարաւակի է կոչւում, որովհետև տակը ամբողջովին քար է, Կարմիր է կոչւում, որովհետև նախ կարմիր քարով ու աղիսով է շինուած և երկրորդ՝ աւանդութիւնն ասում է, թէ Աւարայրի ճակատամարտից վիրաւըներին բերել են այստեղ և նրանց արինով կարմիր է ներկուել վանքի գաւիթին ու սանդուղքները: Խնդրակատար մակդիրն էլ ստացել է նա, որովհետև ժողովրդական՝ հաւատը մեծ զօրութիւն է վերագրում նրան, ամեն խնդիր կատարում է նա: Մի չորրորդ անուն ևս ունի վանքը, որ սակայն, քիչ է գործ ածւում: Աստապատայ վանք, Աստապատ գիւղի մօտ գտնուելու պատճառով: Թուրքերը և ոռւսները նրան կոչում են Կրզըլ վանք և այդ անունով է յայտնի նաև սրա անմիջապէս մօտը 40 տարի առաջ հիմնուած փոքրիկ հայաբնակ գիւղը:

Ս. Ստեփանոսի վանքը հաւանականորէն հիմնուած է Զ. դարում: Նա յիշւում է Խաչիկ Ա. կաթուղիկոսի կոնդակի մէջ 976 թուին, և այդ թուականը կրող մի խաչքար էլ կայ եկեղեցու գրան աջ կողմը:

Շահ-Արբասի աւերածութիւններից յետոյ Պաւղոս վարդապետը, Թումայ եպիսկոպոս առաջնորդը և Աստապատի քահանաներն ու ժողովուրդը նորոգել են պարիսպը, ինչպէս երեսում է պարսպի վրայի արձանագրութիւնից:

Մի առ ժամանակ յետոյ, ինչպէս վկայում է Զաքարիա Վաղարշապատցին, Շներունի մաքուր ազումին կուսութեամբ պերճացեալն և հոգլով բարգաւաճեալն Յակոբ վարդապետ Աստապատցի... զվանքն Աստապատու, որի վերայ Երասխայ կայ ի կատարս քարանձաւին, շինեալ պայծառացոյց զրովանդակն, զպարիսպն և զեկեղեցին և զամենայն զորս ի նմա կան շինուածքաւ: *)

Ինքը, Յակոբ վարդապետը ամփոփուած է այս վանքի մէջ, հարաւային դասի մօտ: և ունի տապանագիր 1673 թուականով:

1697 թուին էլ Յովհէփ անունով մի վարդապետ վանքի արևմտեան կողմում շինել է տուել բաւականաշափ բնակարաններ, և ինքը թաղուած է զանգակատանը 1706 թուին:


ԺԹ. գարի սկզբին Արբաս-Միրզան քանդել է տուել պարսպի մի մասը՝ քարերը Արբասապատի վրայ գործածելու համար:

*) Ցիշ. Սիսական. եր. 507:

ժողովրդական աւանդութիւնը յիշում է մի Բարսեղ անուշնով կաղ վարդապետի, որ գիւղից գիւղ ընկած ժողովարարութիւն է արել, որպէսզի այս վանքը վերանորոգէ: Շահը կանչել է սրան իւր մօտ և յանդիմանել, թէ ինչի՞ է նեղում ժողովրդին, ժողովարարութիւն անելով:

Սկզբում սրա լեզուն կապ է ընկել, բայց յետոյ սիրտ է տանել և ասել, «Ես կամենում եմ Աստծու տուն շինել, քո կեանքիդ համար արեշատութիւն և տէրութեանդ յարատեսութիւն ինչղելու համար»: Պատասխանը գիւր է եկել շահին և սա հրամայել է 300 թուման նուէր և Կարսիր վանքը վերանորոգելու հրաման տալ նրան: Նա էլ եկել վերանորոգել է այս վանքը:

1736 թուին Արքանամ կաթուղիկոսը տեսնելով տեղի վայելչութիւնը և միենոյն ժամանակ ամայանալը՝ հառաջում է. «Ի՞նչ յանապատն օրհնեալ գիւղաքաղաքն և ի վանքն Աստուպատու, զեղեցկաշէն և պատուական: Աւելդ ժամանակիս նեղութեան և նուազութեան ազգիս իմոյ Արքամեան. զի գալարին աղիք իմ ի տեսանելն զաննուան վանորայս և զսուրբ ուխտսն, վասն ոչ գոլոյ թեմ և վլճակ. և թէպէտ գոն՝ բայց ամայի անշէն և անմարդարնակ»...¹⁾



Կ Ա Ր Մ Ի Բ Վ Ա Ն Ք Ը

1831 թուին Նիկողայոս վարդապետը նորոգել է տուել եկեղեցու հիմնապատերը, որ ուրիշ շէնքերի հետ բաւական վխասուել է: 1840 թուի երկրաշարժից:


Այժմ վանքը պահպանում է մի վանահայր վարդապետ, որ վանքի սենեակները երկաթուղու զիծը անցկացնող կապալասուին

¹⁾ Սիսական եր. 513.

տուել է օգտուելու այն պայմանով, որ նա վերանորոգէ եկեղեցու մի քանի խախտուած մասերը:

Վանքն այժմ կարող է վերանորոգուել և մասամբ ծաղկել, որովհետև նրա մօտն է գտնուու երկաթուղու մի կայարան:

Կարմիր վանքը շինուած է կարմիր, տաշած բարից մինչև մի սաժէն բարձրութեան, չնաշուած հիմքը, և թրծած աղիւալից տացած մասը և գմբէթը: Վանքը բաղկացած է եկեղեցուց և գաւթից: Եկեղեցու երկարութիւնն է 24 արշին, լայնութիւնը 19 արշին և բարձրութիւնը՝ մօտ 21 արշին: Եկեղեցին արտաքուստ շատ պարզ է, երեքական արարական կամարներ իւրաքանչիւր պատի վրայ և երկու բարձրաքանդակ հարաւային պատի մէջ, որ ներկայացնում են Քրիստոսի մկրտութիւնը՝ կազմում են ամբողջ



ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔԻ ՑԱՍԿԱԳԻԾԸԸ

Պարդարանքը: Ներքուստ համեմատաբար շատ աւելի գեղեցիկ է, մանաւանդ, որ ամբողջովին ծածկուած է իւղանկար պատկերներով: Երկու ամբողջական և վեց որմասիւների վրայ բոլորում են արարական կամարներ, կրելով իրենց վրայ մի բաւական բարձր (8 արշին) գմբէթ: Հինգ քառանկիւնի պատուածն, իւրաքանչիւրը 1 արշին բարձրութեան և 10 վ. լայնութեան աղօտ լոյս են սփուսմ եկեղեցու մէջ: Ութ փոքրիկ պատուածներ էլ բացւում են գմբէթի ներքին մասում, և սրանց միջև կան հետեւեալ սրբերի պատկերները՝ իրենց մակագրութեամբ: Սեղբեստրոս հայրապետ, Խէոդոս թագաւոր (գալիսոնը ձեռին), Ս. Ներսէս, Արքար թագաւոր (դաստառակը ձեռին), Ս. Սահակ Պարթև, Տրդատիս թագաւոր, Ս. Գրիգոր Լուսաւորիչ և Կոստանդիանոս թագաւոր: Սրանցից ներքեւ, կամարների անկիւններում էլ նըւկարուած են չորս աւետարանիչների պատկերները: Տպաւորութիւնը թուլացնում են ներքնում, պատերի մէջ բացուած պարս-

կական տգեղ պարհանաները, Սեղանը ևս զարդարուած է Տիբամօր պատկերով, Յիսուսը գրկին: Ոչ մի պատկերի տակ չէ նշանակուած նկարողի անունը, կայ միայն նկարելու թուականը՝ 1859—1860. բոլորն էլ միջակ բաներ են և գեղարուեստական առանձին արժեք չունեն: Եկեղեցին ունի նաև երկու խորան և մի գաղտնի պահարան՝ եկեղեցու տակ, ուր կարելի է իջնել մի գընովի սանդուղի միջոցով: Նրա խորութիւնն է $3\frac{1}{2}$ արշին, երկարութիւնը 3 արշ, և լայնութիւնը $3\frac{1}{2}$ արշին: Այդ տեղ էին պահւում վանքի սրբութիւններն ու գանձերը՝ մահմեդականների յարձակումների ժամանակ:

Եկեղեցին ունի միայն մի դուռն, արևմտեան կողմը, որ բացւում է դաւթի կամ զանգակատան մէջ: Մըրա երկարութիւնն է 14 արշին 12 վ. լայնութիւնը 9 արշին 12 վ.: Շինուած է տաշած քարից և թրծած աղիւաից: Երկու ամբողջական և վեց որժնասիւներ այստեղ ևս կրելիս են եղել մի փոքրիկ զմբէթ, որ 1840 թ. երկրաշարժից քանդուել է: Մի կերպ կախուած են երկու զանգակներ: Գաւթի մէջ կան վեց տապանաքարեր, որոնցից միայն մինի վրայ մնացել է տապանազիրը կրող մարմարոնեայ քարը, որ ցոյց է տալիս, որ այդտեղ թաղուած է Յովսէփի արքեպիսկոպոսը (1666 թուին): Գաւթի հարաւային դրան ճակատին կայ մի բարձրաքանզակ, որ ներկայացնում է այս վանքը, ներքենում մի հոգևորական, (երեք Յովսէփի եպիսկոպոսը, որ նորոգել է այս վանքը) ձեռին բուրքաւու:

Գաւթի գմբէթի քարերի մէջ եղել են երկու առիւծանման արձաններ, որոնք մի առժամանակ դրուած էին դարպասի առջև, սակայն վերջիններու նախիջևնական տարել է և իւր տան դարպասի առջև կանգնեցրել:

Եկեղեցու շուրջը կան բաւականաչափ մի և երկյարկանի սենեակներ, ընդարձակ գոմ, շտեմարան, խոհանոց և այլն:

Վանքը շըշապատուած է քառանկիւնի հաստ, բարձր և չորս աշտարակներով ամբացած պարսպով, շինուած տաշած քարից: Արևելեան կողմում կան երեք դարպասներ, որոնցից ամենամեծի վերև, մի տաշած քարի վրայ գուրս է փորուած մի արծիւ ճանկերի մէջ մի գառ, երկու կողմը մի մի խաչքար:

Կարմիր վանքում կան հետևեալ սրբութիւնները,

1. Աջ արբոյն Ստեփանոսի նախավկայի. արծաթէ, որից կախուած է նոյնապէս ակներով զարդարուած մի խաչ:

2. Աջ արբոյն Արիստակէսի, արծաթէ, ոսկեզօծ, որից կախուած է նոյնապէս ակներով զարդարուած մի խաչ:

Վանքը ունի 750 դիսեատին հող և մի պարտէզ (1200 ք. ս.)

Արձանագրութիւնները

Պարսպի վրայ.

Ի ժամանակս պարօից արք ոյին օտն Աբբասի Պաւլոս վարդապետս, Թումայ Եպիսկոպոս առաջնորդս, և մեք տատապատեցի հնից և ծղվրդք նորոգեցինք զպարհապս զայս և ընկերոց իմ օխնեցինք զպարհապս ի նիւտնեց կամատ ամենակալին Աստուծոյ...

Մի գերեզմանաբարի վրայ, 1660 թուին.

Այս է տապան Զաք որիա վարդոպետին. թվ. ՌՃԹ.

Զանգակատան հարաւային կողմի մարմարիոնապատ գերեզմանաբարի տապանագիրը, 1666 թուից: Քանդակուած է Եպիսկոպոսական գաւազան, վերևում երկգլխանի օձ:

Յայս տապանի կայ պանեսի
Ցովսկի քաջ Եպիսկոպոսն արնի.
Որ է տեղեւալ Աստապացի.
Նորոգոյ բազմաշխատ այս ուխտի,
Աւակերտն Յակոբայ մեծի,
Որ կայ ի դուռն խորանի,
Առ Տեր նանցեաւ ՌՃՇՀ.-ի
Յաւուր սրբոյ մեծի Զատկի:

**Եկեղեցու մէջ, հարաւային կողմի գերեզմանի տապանագիրը՝
1673 թուից.**

Այս է տապան դամբարանի,
Տեսոն Յակոբայ վարդապետի.
Այս բարունոյս մերոյ վեճի
Էին ազիմիք արք Երեմի,
Աստուծատուր և Պալոն և Թեզոն
Որդին սոցին ծախսիք վեմս կազմի
և կափարիչն էլ տիրուի թվ. ՌՃԻԲ

Գերեզմանաբարի կողքերին էլ գրուած է.

Պալոնի նայր Հայրապետ Թեզոնի որդի Նուրիջան Աստուծատուրի որդի Ավան:

Պարսպի գուան վերև, արծուի. մօտի խաչի տակ, 1707 թուին.

Սբ Խաչս բարեխոս է և յիշատակ է պարհապս վերակացու Յավնաննես վարդապետին և ծնող ոցն Մալխասին և Ղզերարին և հիւերն Շանփարվարին. թվին ՌՃՇԶ.-ին.

Կարմիր-վանքի մօտը կայ մի փոքրիկ գիւղ միմնոյն անունով (630 4'3"-390 5'14") որ բռնում է 4 դես. 1350 թ. ս. տարածութիւն: Բնակիչները հայեր են, Դարաշամբից, 24 տուն, 85

ար. 75 իդ. միասին 160 հոգի: Ունին 137 դ. 870 ք. ս. վարելաւ-
հող, 2000 ք. ս. այդի, 495 դ. 2285 ք. ս. արօտատեղի:

Կարմիր-վանքից հազիւ հինգ վերստ դէպի հարաւ, անմի-
ջապէս Արաքսի ափին, այնտեղ, ուր այժմ գտնւում է Նեհրաս
պահակատունը, մնում են նախկին Խրամ բաղսէ հետքերը՝ մի
և կեղեցու հիմնապատեր և մի քանի գերեզման:

Ապացոյց, որ այդ տեղ է եղել Խրամ քաղաքը՝ կարող է ծա-
ռայել նախ այն, որ թովքա Արծրունին որոշակի մատնացոյց է
անում, ասելով. «Որ է ի ներքոյ Աստապատայ վանացն, յեզր Ե-
րասխայ», *) և երկրորդ՝ դրա այժմեան անուն Նիհրամը արարերէն
խրամ է նշանակում:

Այս քաղաքին վերաբերեալ պատմական անցքերից ամենա-
նշանաւորը այն է, որ արարացիները 643—44 թուին առան նը-
րան, տղամարդկանց սպանեցին, իսկ կանանց և երեխաներին
զերի վարեցին: **) Այս աւերածութիւնից զրեթէ կէս դար յետոյ
(688 թուին) այս քաղաքը կրկին ենթարկուեց արարացիների ա-
ւերածութեան: Ստկայն աւելի աղետալի եղաւ նրա վիճակը,
երբ 705 թ. արարացոց Կաշմ ոստիկանը հաւաքեց 400 հոգի հայ ա-
ւագանիներ Խրամի եկեղեցին հաւատարմութեան երդումն առնելու
և երդմազանցութեամբ փակեց նրանց եկեղեցու մէջ և այրեց¹⁾
ընակիչներից շատերին էլ գերեց: Սակայն այս դժոխային հա-
րուածից յետոյ էլ քաղաքը երկու դար շարունակ պահպանեց իւր
դոյութիւնը, երբ 972 թուին վերջնականապէս աւերուեց մի ա-
ւագակային մեծ խմբի յարձակմամբ²⁾:

Խրամ քաղաքի տեղը ներկայացնում է մի նեղ հովիտ, ան-
միջապէս Արաքսի ափին: Գետի աջ, այժմեան պարսկական, ա-
փին անմիջապէս ձգուում են մերկ լեռներ, այնպէս որ քաղաքը
այն կողմը տարածուելու բոլորովին տեղ չէ ունեցել, այլ միայն
ամփոփուել է նախ ափի վրայ, որից մօտ ¼ վերստ հեռու ձգուու-
է Ղըզըլ-գեադուկ փոքրիկ լեռու: Մի փոքրիկ հովիտ էլ բացւում
է արևելեան կողմը, այս և իիւրհինուր լեռների մէջ, ուր նոյնպէս
նկատելի են շինութեան հետքեր, բայց ոչ այնպէս խիտ, ինչպէս
Արաքսի անմիջապէս ափին: Եկեղեցին գտնւում է մի փոքրիկ
հողաբլրի վրայ: Տնատեղերում գտնւում են թաղուած կարասներ,
որոնք հաւանականօրէն գինի պահելու համար են յատկացրուած

*) Թովմա Արծրունի 118.

**) Ղեռնդ պատմ. եր. 18,

1) Ասողիկ. եր. 124, Թովմա Արծրունի եր. 116. Ղեռնդ
Պատմ. եր. 33.

2) Զամչետն Հայոց պատմ. II. եր 842.

եղել։ Գերեզմանաքարեր տապանագրերով և առանց նրանց՝ ոչ մի հատ չեն նկատուած։

Երամ բաղաքից 2 վերստ հեռու, Արաքսի աջ ափին գըտընւումէ Դարասամբ փոքրիկ գիւղը և նրա մօտ՝ Մաղարդայ հոչակաւոր վանքը, երկուան էլ պարսից պետութեան սահմանում։

Նախիջնանից դէպի հիափս գտնուող գիւղերը

Նախիջնանից դէպի արևմտահիւսի գտնուում է Բաղաջանն գիւղը ($63^{\circ}6'17''$ — $39^{\circ}12'54''$), որ բռնում է 2 դես. 1604 ք. ս. տարածութիւն և իւր մօտ ունի 2 դ. 880 ք. ս. տարածութեան անտառ։ Գիւղում ուշադրութեան արժանի ոչինչ չկայ. բնակիչները շիա թուրքեր են, 28 տուն, 137 ար. 83 իգ. իմիասին 220 հոգի Ռնին 140 դ. 1298 ք. ս. վարելանող և միայն 2110 ք. սաժէն արօտատեղի։

Բաղաջնանից $\frac{1}{3}$ վերստ դէպի հիւսիս, իսկ Նախիջնանից 12 վերստ դէպի հիւսիս-արեւելք գտնուումէ այգիներով շրջապատուած և պարտէզներով հովանաւորուած նարման գիւղը, ($63^{\circ}6'42''$ — $39^{\circ}13'54''$) որ բռնում է 14 դ. 2234 ք. ս. տարածութիւն։ Գիւղի անունը տեղացիների սրախօսութեամբ յառաջացել է նարմ-ջան, կէս մարդ խօսրից, որպէս թէ քաղաքին մօտիկ գտնուելով միշտ կեղեքուել են Նախիջնանի խաներից։

Գիւղը շատ լաւ տպաւորութիւն է գործում։ Թէպէտ ոչ բոլոր, սակայն կան բաւականաչափ գեղեցիկ, և նոյն իսկ երկյարկանի, եւրոպական ձևով կահաւորուած բնակարաններ, մի քանի լայն փողոցներ, ուստինիներով զարդարուած, բաւական գեղեցիկ եկեղեցի գմբէթով, որ շինուած է 1860 թուին։ Սակայն պարսկական ազգեցութիւնը գետ ևս չէ անհետացել, ցեխէ պարիսպները ձգում են ծուռն ու մուռ փողոցների երկու կողմում, պաշտպանելով իրենց յետեւում շինուած հասարակ աները։ Գիւղը զուրկ է աղբիւրներից, բայց ունի բաւականաչափ ջրհորներ, որոնց ջուրը կարելի է խմելու համար էլ գործածել։

Մի մեծ արխ Նախիջնանի գետից սրանց համար ջուր է բերում, սակայն յաճախակի պատահող հեղեղները շուտ շուտ փշացնուում են և մեծ վնասներ պատճառում գիւղացիներին, իսկ Նախիջնան-գետը բարձրացած միջոցին բաղաքի հետ յարաբերութիւնը կամ կարւում և կամ շատ վտանգաւոր է դասնում, որովհետև կամուրջներ չկան Գիւղի հողերի մի մասը իրենց գիւղացիների սեփականութիւնն է դարձել, մի մասը գեռ պատկանում է Զիլֆիղար-խանովին. մի մասն էլ արքունական է, Գիւղի բը-



ԵԱՐԵՋԱ ԳԻՒՂ

նակիչները կազմում են բնիկները և գաղթականներ։ Բնիկները՝ պարօկահայոց գաղթականութեան միջոցին 8 տուն են եղել, իսկ այժմ դարձել են 40 տուն, սրանք առանձնացած են հարաւային թաղում և պահել են թէ իրենց բարբառը և թէ սովորութիւնները։ Դաղթականներն երեք խմբի են բաժանւում, Սաւրեցիներ, Խոսրովեցիներ և Խոյեցիներ։ Ո՞չ բնիկները և ոչ էլ գաղթականները միմեանց հետ չեն ձուլուել և այժմ էլ նկատում են որպէս առանձին միութիւններ։ այսպէս՝ թէ գիւղապատկան հողը, թէ ջուրը և թէ հարկը գիւղացիների վրայ բաժանելիս՝ նախ չորս հաւասար մաս անելով, յանձնում են այս չորս «թայֆաններին», չնայելով, որ սրանք հաւասարաչափ տներից կամ անձերից չեն բաղկացած։ Յետոյ արդէն իւրաքանչիւր թայֆան ինքնուրոյնօրէն բաժանում է իւր անդամների մէջ։

Գրեթէ ըոլորն էլ պարապում են երկրագործութեամբ, այդպես առանութեամբ, գինեգործութեամբ, բամբակի մշակութեամբ և շերամպահութեամբ։ Սաւրեցիներից շատերն էլ զանազան քաղաքներում առևտուր են անում, մանաւանդ պատրաստի հանդերձեղէնի։ Առաջները մշակում էին նաև ծխախոտ և պատրաստում էին քթախոտ, որ այս կողմերում ամենալավն էր համարում։

Ունին 715 դ. 2081 ք. ս. վարելահող, 100 դ. 115 ք. ս. այգիներ, 68 դ. 1080 ք. ս. արօտատեղի։

Բնակիչները 176 տուն են. 623 ար. 602 իգ. իմիասին 1225 հոգի։

Նարմաջայից դէպի հիւսիս գտնուում է Պուլի-բեկ-դիզա (63°7'2"-39°15'19") և Թեարիմ-բեկ-դիզա (63°7'7"-39°15'33") փոքրիկ, հայաբնակ գիւղերը, որոնք իրենց անուններն ստացել են գիւղատէր Ղուլի-բէկ և Քեարիմ-բէկ եղբայրներից։ Առաջնի մէջ կայ մի նորակառոյց եկեղեցի և միդասեան պետական զարդոց բնակիչները Սալմաստի Մահլամ գիւղից են. ընդամենը 66 տուն, 191 ար, 183 իգ. իմիասին 374 հոգի։

Երկրորդ գիւղը, որ միայն 1 դ. 1000 ք. ս. տարածութիւն է բռնում, յիշատակութեան արժանի բան չունի, բնակիչները 31 տուն են, 5 է ար. 50 իգ. իմիասին 104 հոգի։

Առաջին գիւղը ունի 113 դ. 600 ք. ս. վարելահող և 236 դ. 600 ք. ս. արօտատեղի, իսկ երկրորդը՝ 67 դ. 550 ք. սաժէն վարելահող, 13 դ. 1700 ք. ս. այգի և 1 դես. արօտատեղի։

Քեարիմբէկ-դիզայից դէպի հիւսիս, հազիւ երկու վերստ հեռու մի բլրակի շուրջ տարածուումէ Քիւլ-բափա գիւղը (63°7'4"-39°16'43"), Բլուրը, որ ներկայացնում է եօթը յարկանի մի գերեզ-

մասատում ^{*)}) և մեծ մտսամբ մարդկանց աճիւնից է բաղկացած՝ կոչչում է Թիւլ-թափա, այսինքն Մոխրա-գագաթ, և իւր անունն էլ առւել է գիւղին Այս ըլրի գագաթին սի ժամանակ սի փոքրիկ ամրոց ևս շինուած է եղել, իսկ այժմ բարձրանում է մի հասարակ մատուռ, որ շինել են պարսկահայ գաղթականները, կարծելով, որ այս գիւղում պահուած ո. Հոփսիմէլի մասունքը այս ըլրի մէջ ծածկուած պիտի լինի: Սակայն յետոյ այդ մասունքը գտել են ըլրից փոքր ինչ հարաւարեկիք, դաշտում կանգնած մի կիսաւեր մատրան մէջ, քարէ սարկոֆաժի մէջ ամփոփուած: Մասամբ վերանորոգել են այդ հին, հասարակ մատուռը, մասունքը ամփոփել են մի արծաթեայ աջի մէջ և դրել իրենց նորաշէն եկեղեցու մէջ, սարկոֆաժն էլ պահել նոյն եկեղեցու խորանում:

Բնակիչները հայ գաղթականներ են Սալմաստի Փայաջուկ պիւղից: Պարապմունքը մինոյնն է, միայն սրանք բամբակ չին մշակում, որովհետեւ բաւականաչափ ջուր չունեն: Ընդամէնը՝ 126 տուն են. 191 ար. 183 իգ. իմիասին՝ 374 հոգի:

Թիւլ-թափայից փոքր ինչ հիւսիս ընկած է Մամարզ դիզա փոքրիկ, աննշան գիւղը 58 տուն, 119 ար. 94 իգ. իմիասին՝ 213 հոգի բնակչով, որից 39 տունը, 40 ար. 33 իգ. իմիասին՝ 73 հոգի, հայեր են և 19 տունը, 79 ար. 61 իգ. իմիասին 140 հոգի թուրքեր:

Սրանից էլ փոքր ինչ հիւսիս գտնուում է Ալազեազ Մագրան (6307'25"—39°18'36") որ անզաւորուած է մի գաշտի վրայ, որի հիւսիս-արևելքան կողմում բարձրանում է Սարի-գաղ լեռը, իւր առջեւ ունենալով երկու շարք բլուրների, որոնցից հիւսիսայինը կոչչում է Դույլի-գաղ (հորի-սար), որովհետեւ սրա գագաթին կայ 2 հոր 20 սածէն խորութեամբ և մօտ մի արշին տրամագծով: Հարաւային շարքի բլուրներն էլ Միս-սար (պղնձի-սար) անունն են կրում, որովհետեւ պղնձագոյն են, այստեղ գտնուում է հասարակ մարմարիոն:

Գիւղը բռնուում է 7 դ. 1200 ք. ս. տարածութիւն, ջրառատ է, ունի երեք արիս և մի աղբիւր: Բոլոր հողը արքունական է. 192 դ. վարելահող 39 դ. 1200 ք. ս. այգի, 14 դեսեատին, 600 ք. ս. արօտաւաեղի: Բնակիչները հայ գաղթականներ են Սալմաստի Սոմ, Մահլամ, Կալասար, Հաֆթվան գիւղերից և Խոյից: Ընդամէնը՝ 98 տուն են, 298 ար. 278 իգ. իմիասին՝ 526 հոգի: Պարապմուն-

^{*)} Տես «Նախապատմական շրջան».

քը նոյնն է. այստեղ համեմատաբար բամբակի մշակութիւնը աւելի յառաջացած է, որովհետև ջուր շատ ունին:

Ալագեսդ-Մազրից հազիւ 3 վերսա գէպի հիւսիս գտնուում է Խալխալ հայաբնակ գիւղը. (6307'17"—39020'15"), որ բռնում է 2 դես. 2110 ք. ս. տարածութիւն. Այս գիւղն ունի 128 դ. 190 ք. ս. վարելանող, 40 դ. 2060 ք. ս. այգիներ, 5 դես. 120 ք. ս. անտառներ. 9 դես. 1160 ք. ս. արօտատեղի: Բնակիչները 99 տուն են. 162 ար. 133 իգ. իմիասին 295 հոգի:

Խալխալը այս ոստիկանական շրջանի վերջին գիւղն է, որ գտնում է Ձահրի գետակի ձախ ափին: Այստեղից անցնելով գետը պատահում ենք Նազարապատ և Դիտուվար գիւղերին, որոնք Բ. ոստիկանական շրջանի մէջ են անցկացրած, և յետոյ արգէն գալիս ենք Վերին-Ռոզուն-Օբան (6306'32"—39012'30").

Սա բռնում է 4 դես. 1840 ք. ս. տարածութիւն, կալուածատիրական է և պատկանում է մի թուրքի. գիւղի ստորոտում կայ բարդի ծառերի անտառ 10 դ. 1064 ք. ս. տարածութեամբ: Դիւղում կայ մի աղրիւր և մօտից անցնում է Դալմա-արիը, որի ջուրը իւրաքանչիւր 18 օրից յետոյ չորս օր գործ է ածւում այս գիւղի այգիներն (43 դ. 1064 ք. ս.) և վարելահողերը (251 դ. 1366 ք. ս.) ջրելու. ունին միայն 4 դես. չ40 ք. ս. արօտատեղի: Դիւղում կայ մի հասարակ եկեղեցի: Բակիչները 66 տուն են. 256 ար. 209 իգ. իմիասին 465 հոգի, որից 33 տուն, 118 ար. 107 իգ. իմիասին 225 հոգի Խոյեցի հայեր են, 27 տուն, 138 ար. 102 իգ. իմիասին 240 հոգի թուրքեր: Պարապմունքը նոյնն է: Դիւղից փոքր ինչ հիւսիս գտնում է Ներքին կամ Աշողա Ռոզուն-Օբան, որի բնակիչները ըոլորն էլ թուրքեր են, 84 տուն, 340 ար. 330 իգ. իմիասին 670 հոգի.

Ուղուն-օրա-աշաղայից փոքր ինչ հարաւ բարձրանում է Քիւլ-Թափա-ըլուրը, որ գերեզմանատուն է եղել *): Սրա մօտ է Խալխու փոքրիկ հայաբնակ գիւղը, որ բռնում է 1150 ք. սաժէն տարածութիւն, 39 տուն բնակչով՝ 148 ար. 139 իգ. իմիասին՝ 287 հոգի: Ռևին 73 դ. 1200 ք. ս. վարելանող, 3 դ. 1990 ք. ս. այգի, և 648 դ. 1320 ք. ս. արօտատեղի:

Ապա գալիս է Եխմանմուտ գիւղը, (6305'47"—39015'14") որ բռնում է 5 դ. 2230 ք. ս. տարածութիւն: Շրջապատուած բազմաթիւ այգիներով և պարտէզներով, գիւղը բաւական լաւ տպաւութիւն է թողնում: Դիւղի ծայրին շինուած է շինական դատարանը մի քանի գեղեցիկ սենեակներից բաղկացած: Գիւղի մէջ

*) Տես «Նախապատմական շրջան».

կան բաւականաչափ գեղեցիկ, մի և երկյարկանի տներ, շրջապատուած պարտէզներով։ Մի քանի լայն և կանոնաւոր փողոցներ էլ աւելացնում են գիւղի վայելչութիւնը։ Միակ, պարզ եկեղեցու գաւթում եօթանասնական թւականներում բացուած է եղել ուսումնարան, որի եկամտի մի աղբիւրն էլ նոյն եկեղեցում պահուող Ս. Նշան մասունքի խաչամբոյրն է կազմել։ Շնորհիւ այն հանգամանքի, որ այս գիւղը միայն չորս վերստով հեռու է գտնուում քաղաքից և վաղուց ի վեր դպրոց ունի, բնակիչները մտաւորապէս համեմատաբար աւելի բարձր են, քան միւս գիւղացիները։ Բնակիչները բնիկներ և գաղթականներ են Սալմաստի գիւղերից։ Ընդամէնը 184 տուն են, 683 ար. 654 իգ. ի միասին 1337 հոգի։ Ունին 938 դ. 920 ք. ս. վարելահող, 22 դ. 1345 ք. ս. այգի. 18 դ. 485 ք. ս. անտառ. և 1407 դ. 1575 ք. ս. արօտատեղի։

Կրիցաղի նասարակութեան զիւլերը.—Նախիջևան բաղաքից գէպի հիւսիս-արևմուտք, ընդարձակ տարածութեան վրայ ընկած են ութ թրբանակ գիւղեր, որոնք կազմում են Կըլրաղի գիւղական հասարակութիւնը։

Սրանք են.

Դարաբակլար.—(62°51'32"—39°25'49")։ Բոնում է 9 դեսեատին 1800 ք. ս. տարածութիւն, և շրջապատուած է այգիներով։ Երեսում է, որ հոնումը բաւական նշտնաւոր տեղ է եղել։ այժմ մնում են մի գիւմբազի, մի մինարէի և մի կարաւանատան աւերակները։ Շոպէնը ենթադրում է, թէ կարող էր այստեղ գտնուել Տիգրան Ա. հիմնած Տիգրանակերտ քաղաքը, սակայն դեռ ևս ոչ մի հիմք չկայ այդ ենթադրելու։

Ժէ. գարում ծեմելլի խտալացի ճանապարհորդը այցելել է այս գիւղը, նրան Գարապա է կոչում և աւելացնում, թէ այստեղ կայ քառակուսի ձեռվ շինուած մի մեծ, գեղեցիկ կարաւանատուն և մօսը մի աղբիւր, որի մասին հայերը աւանդում էին, թէ Նոյի Սևմ որդին է հանել՝ վէմը ճեղքելով։ Դաւեռնիչն էլ է եղել այստեղ և նրան կարաբակլեր է անուանել¹⁾։

Բնակիչները բոլորն էլ թուրքեր են. 192 տուն, 903 ար. 887 իգ. ի միասին 1790 հոգի։

Ունին 2995 դ. 1500 ք. ս. վարելահող, 13 դ. 1200 ք. ս. այգի, 116 դ. 600 ք. ս. մարգագետին և 12062 դ. 600 ք. սաժ. արօտատեղի։

Խիթնաւ կամ Խաննաւ և կամ Խաննախ (62° 56'36"—39° 24'

¹⁾ Ալիշան, Միսական. եր 505.

2") Մի աննշան գիւղ է, Զնաբերդից մօտ երեք վերստ գէպի առևելահարաւ և բռնում է 7 դես. 1200 ք. ս. տարածութիւն: Բը-նակիչները թուրքեր են 39 տուն. 174 ար. 146 իգ. իմիասին՝ 320 հոգի: Ունին 1090 դ. 1335 ք. ս. վարելահող, 3. դ. այգի 1495 դ. 1340 ք. ս. արօտատեղի:

Իւրչի—Գերդասար. (62°48'56"—39°24'46") . Մի փոքրիկ, ան-նշան գիւղ է, 3 դես. 1800 ք. ս. տարածութեամբ և 56 տուն թուրք բնակչով, 273 ար. 217 իգ. ի միասին 490 հոգի: Ունին 462 դ. 1730 ք. ս. վարելահող, 4 դ. 1200 ք. ս. այգի, 78 դ. 1800 ք. ս. արօտատեղի:

Կրվալ (6°46'41"—39°24'18"). Տեղաւորուած է Շարուր-Դա-րալագեազի և Նախիջևանի զաւառների սահմանագլխում, բռնում է 10 դես. տարածութիւն: Ուշադրութեան արժանի ոչինչ չունի. բնակիչները թուրքեր են, 176 տուն. 819 ար. 771 իգ. ի միասին՝ 1590 հոգի: Ունին 2038 դ. 1675 ք. սաժէն վարելահող, 8 դես. 1200 ք. ս. այգի և 1362 դ. արօտատեղի:

Այստեղ է գտնւում այս հասարակութեան շինական դատարանը:

Խոկ հնումը Կող. (62° 50' 10"—39° 22' 37") Տարածուած է մի առուակի ափին, և բռնում է 12 դես. 1440 ք. ս. տարա-ծութիւն: Շրջակայքում կան բաւականաչափ շինութիւնների և 2 կարաւանատան հետքեր, հիւսիսային կողմում մի փոքրիկ ամ-րոցի աւերակ: Այս բոլորն ապացուցանում են, որ սա հնումը բաւական նշանաւոր աւան է եղել և իւր անունը տուել է այս գաւառակին, որ մինչև այժմ էլ կրում է, թէպէտե՛ռուական ար-դի բաժանմամբ՝ վերակոչուած է Կըվրազի հասարակութիւն:

Բնակիչները բոլորն էլ թուրքեր են. 127 տուն, 593 ար. 507 իգ. ի միասին՝ 1100 հոգի, պարապմունքը նոյնն է. ունին 3145 դ. հող, 3 դ. այգի և 11024 դ. 1750 ք. ս. արօտատեղի:

Խոկից մինչև Նախիջևան, 28 վերստ երկարութեամբ տա-րածում է մի անջրդի, ամայի գաշտ, որ կոչում է Բոյիկ-գուգ: Այժմ մի ընկերակցութիւն է կազմուում ոռոգելու այս դաշտը:

Սուս. (62° 58' 10"—39° 21' 54"). Համանուն ազանքից 3 վերստ հեռաւորութեան վրայ ընկած մի փոքրիկ գիւղ է և բռնում է 2 դես. 298 ք. ս. տարածութիւն: Բնակիչները բոլորն էլ թուրքեր և քրդեր են, 97 տուն, 465 ար. 365 իգ. ի միասին՝ 830 հոգի, որից 118 ար. 92 իգ. ի միասին 210 հոգի թուրքեր են, 347 ար. 273 իգ. ի միասին՝ 620 հոգի քրդեր: Բացի սովորական պարապմունքից, աշխատում են նաև աղանանքում: Ունին 526 դ. 600 ք. ս. վարելահող և 2724 դ. 1527 ք. ս. արօտատեղի:

Կաբուլու. ($6^{\circ}46'38'' - 39^{\circ}25'52''$). Մի աննշան, փոքրիկ դիւզ է, 2 դ. 1000 ք. ս. տարածութեամբ. ունի մի սառնորակ, յորդ աղբիւր, Բնակիչները բոլորն էլ թուրքեր են 32 տուն, 158 ար. 142 իգ. ի միասին՝ 300 հոգի. Ունին 360 դ. վարելահող, 1022 դ. 650 ք. ս. քարքարոս արօտատեղի:

Եանիախսի. ($62^{\circ}45'28'' - 39^{\circ}25'15''$). — Բռնում է 6 դ. 2360 ք. սաժէն տեղ, բաւական գեղեցիկ տեսք ունի, և շրջապատուած է այդիներով (1440 ք. սաժէն տարածութեամբ). Սրա մօտ գըտնընընը է համանուն պահակատունը, և մի քիչ էլ հեռու երկաթուղու կայարանը. Գիւղի մէջ ուշադրութեան արժանի ոչինչ չկայ, բնակիչները շիա պարսիկներ են, 119 տուն, 541 ար. 459 իգ. ի միասին 1000 հոգի. Պարապմունքը նոյնն է: Ունին 1329 դ. 200 ք. սաժէն վարելահող, 8 դ. 2180 ք. ս. մարգագետին և 579 դ. 990 ք. ս. արօտատեղի: Գիւղում կայ պետական երկդասեան մի գողոց: